2. Woher kommen Sie? Ich komme aus dem Garten, und ich gehe jetzt zu meinem Lehrer. Bei wem wohnt er? Er wohnt bei dem Buchhändler, der Poſt gegenüber. Erwarten Sie mich binnen einer Stunde. Karl ging ſeinem Vater entgegen. Der Diener handelte meinem Befehle gemäß. Ich habe meinen Freund S. ſeit zwei Jahren nicht geſehen. Dieſer kleine Knabe iſt von (ſeiner) Kindheit an blind.

Թարգմութիւն. 119.

1. Ես փողոցին կ'անցնէի (ging): Այս գիրքն եղբօրս համար է: Բարեկամութիւնը հոգւոյն համար պէտք մըն (ein Bedürfnis) է: Մենք դուռը (ջերմ. դրան դէմ) հրեցինք (ſtießen), բայց չկրցանք զանի բանալ: Գողը դէպ ի անտառ շեղեցաւ (wandte ſich): Երկիրն արեւուն բոլորտիքը կը դառնայ (dreht ſich), եւ լուսինն երկրին բոլորտիքը կը դառնայ: Ինչո՞ւ առանց իմ հրամանիս (թոյլտուութեանս) դուրս ելած էք: Ես երկաթուղւոյն երկայնութեանը կը պտըտէի (Ich ging... ſpazieren): Պատուհանէն (ներս) զինքը կը դիտէի:

2. Ուստի՞ կու գաք: Պարտիզէն կու գանք: Խոյէն դուրս մ'ելլէք: Հոն ոչ ոք կար բաց ի եղբօրմէս: Տ. Ռիքարտոս հօր եղբօրս քովը կը բնակի: Անիկա երէկ մեր քովը ճաշեց: Մէկ տարիէն (ջերմ. տարուան մէջ) ուսումներս լմնցուցած կ'ըլլամ (պիտի ըլլամ): Նամակատունը եկեղեցւոյն [ճիշդ] դիմացն է: Պատերազմն վերջը խաղաղութիւնը կը յաջորդէ (կու գայ): Դասէն (Stunde) վերջը պիտի խաղանք: Անիկա ի մանկութենէ (իւրմէ) հիւանդ էր: (Ես) զինքը հինգ տարիէ ի վեր կը ճանչնամ: Այս խօսքերուս վրայ (bei) մունջ մնացի: Ես կամ Բարիզ եւ կամ Լոնտոն պիտի երթամ: Անիկա իմ հրամանացս համաձայն կը գործէր: Երիտասարդն ընդդէմ իւր ծնողացը կամայ ամուսնացաւ: Հիւանդը վտանգէն ազատած է:

3. Առնական հոլով խնդիր առնող նախադրութիւնք:

Anſtatt կ. ſtatt փոխանակ, տեղը.
außerhalb (այս տեղէս) դուրս.
diesſeits այս կողմանէ.
ungeachtet հակառակ, թէպէտ.
unweit (unfern) ոչ շատ հեռու, մօտ.
vermöge } զօրութեամբ. համա-
laut, kraft } ձայն.
längs[1] երկայնութեանը.
oberhalb վերի կողմը. վրան.
unterhalb վարի կողմը, տակը.
jenſeits այն կողմանէ.
innerhalb միջոցին.
unbeſchadet առանց վնասու՝ վնասելոյ.
trotz[1] հակառակ, դէմ.
um — willen համար, պատճառաւ.
vermittelſt (կամ mittelſt) միջնորդութեամբ.
während ատեն, ժամանակ.
wegen[2] համար, պատճառաւ.
zufolge ըստ, համաձայն:

ՄԴ. Կան նաեւ halber եւ halben պարագաներ, համաբ բայց հնացեալ են: Առնք ալ willen ի պէս իրենց խնդրէն վերջը կը դրուին:
Օր. Alters halben ծերութեան համար: Անձնական դերանուան մը հետ միացած ատենին r գիրը ti կը փոխուի. Օր. meinethalben իմ պատճառաւս. deinethalben քու պատճառաւդ, քեզի համար. ſeinetwegen իրեն պատճառաւը. um meinetwillen ինծի համար եւն.:

Օրինակք:

Anſtatt eines Briefes նամակի մը տեղ.
Außerhalb der Stadt քաղքէն դուրս.
Diesſeits des Fluſſes գետին այս կողմը.
Jenſeits des Meeres ծովուն անդին կողմը.

---

1 Längs եւ trotz տրականով ալ կը գործածուին. զ. օ. längs des Fluſſes կամ längs dem Fluſſe; trotz ſeiner Drohungen կամ trotz ſeinen Drohungen հակառակ իւր սպառնալեացը. Թէպէտ կը սպառնար...:

2 wegen իւր գոյականէն վերջն ալ կրնայ դրուիլ:

Innerhalb eines Jahres տարուան մը միջոցին մէջ.
Unbeschadet meiner Ehre առանց պատուոյս վնասելու.
Ungeachtet seines Fleißes Հակառակ իւր ջանիցը, [ըրաւ...
Oberhalb der Brücke կամրջին վերի դին.
Um meiner Ehre willen պատուոյս համար.
Um Gottes willen Աստուծոյ սիրոյն համար.
Während des Winters ձմեռուան առեն.
Wegen des Krieges } պատերազմի պատճառաւ:
Des Krieges wegen }

4. Մերթ տրական եւ մերթ հայցական հոլով խնդիր առնող նախադրութիւնք:

an քովը, մերձ.
auf վրայ. մէջ.
hinter ետեւը.
in մէջը, ի (քաղաքի).
neben քովը, առընթեր.
über վրայ, ի վերայ.
unter տակը, ի ներքոյ. մէջը.
vor առջեւը. յառաջ.
zwischen մէջ տեղը:

Այս նախադրութիւնք տրական հոլով խնդիր կ'ուզեն՝ եթէ դադարո՞ւմ, կամ գործողութիւնն արդէն կատարուած լմընցած եւ կամ անձը կամ իրն արդէն հոն գտնուող ցուցընեն. ո՞ւր (ընդէ՞ր) հարցման կը պատասխանեն. Օր. Das Buch liegt auf dem Tisch գիրքը սեղանին վրայ է: Այսպես կ'ըլլայ միշտ դադարո՞ւմ ցուցընող բայերու քով:

Իսկ հայցական խնդիր կ'ուզեն՝ եթէ ընթացո՞ւմ ցուցընող բայէ մը կախուած են եւ կամ գնէ մը դէպ ի ո՞ւր ուղղութիւն կը ցուցընեն, ո՞ւր (ընդէ՞ր) հարցմամբ. Օր. Ich gehe in den Garten պարտէզ կ'երթամ. ich lege das Buch auf den Tisch գիրքը սեղանին վրայ կը դնեմ:

Օրինակք:

Wir stehen an dem Fuße des Berges.
Մենք լերան ստորոտը կը կենանք.
Stellen Sie sich an die Thüre դրան քովը կեցէք.
Er hatte den Hut auf dem Kopfe գլխարկը գլուխն էր.
Setzen Sie sich auf diesen Stuhl.
Այս աթոռին վրայ նստեցէք.
Der Feind steht hinter der Mauer.
Թշնամին պարսպին ետեւն է.
Hänge den Korb hinter die Thüre.
Կողովը դրան ետեւը կախէ.
Die Fische leben in dem (im) Wasser.
Ձկերը ջրոյ մէջ կ'ապրին.
Das Kind ist in das (in's) Wasser gefallen.
Տղան ջրոյ մէջ ինկաւ.
Der Hof ist neben dem Hause բակը տան քովն է.
Ich legte das Buch neben das Pult գիրքը գրակալին քովը դրի.

Über der Thüre war geschrieben դրան վրայ գրուած էր.
Wir setzten über den Fluß մենք գետէն անցանք.
Der Hund liegt (spielt) unter dem Tisch.
Շունը սեղանին տակն է (կը խաղայ).
Die Katze kroch unter das Bett.
Կատուն սողալով անկողնոյն տակ մտաւ.
Vor dem Aufgang[1] der Sonne արեւուն ելլելէն յառաջ.
Vor einem Jahr տարի մը յառաջ.
Die Truppen rückten bis vor die Stadt
Զօրաց գունդը մինչեւ քաղքին առջեւը յառաջացաւ.
Das Haus liegt zwischen dem Hügel und dem Bach.
Տունը բլրոյն եւ առուակին մէջ տեղն է:

Դիտողութիւն: Ինչպէս ամէն լեզուի՝ նոյնպէս գերմաներենի մէջ ալ նախադրութեանց ճիշդ նշանակութիւնը տալ դժուարին է: Հոս ըստ կարելւոյն իրենց սովորական նշանակութիւնները դրինք. բայց ի գործածութեան բազմապիսի նշանակութիւններ կրնան ունենալ, որոնք իրենց քովի բայերէն կախում ունին եւ լեզուական յատկութիւնք կամ ոճեր են: Այսպիսի ոճերէն գլխաւորները աշակերտին միտքը չշփոթելու համար, աւելի պատշաճ կը համարինք Բ. մասին մէջ աւանդել իսկ ասացածները շատ կարդալով միայն կրնան սեպհականուիլ:

Բառք:

klettern մագլել.
ruhen դադարիլ, հանգչիլ.
der Schatten շուք, սուեր.
der Zugvogel գաղթող թռչուն.
die weiße Rübe շաղգամ.
der Schuß (հրացանի) հարուած.
erfahren իմանալ, տեղեկանալ.
der Gefährte ընկեր. թալ).
spazieren gehen պարտեզ(ու եր-
sich versammeln ժողվուիլ.
betrachten նկատել, մտածել.
vollenden կատարել, լմընցնել.
der Einfluß ազդեցութիւն.
der Hebel լծակ.
der Aufenthalt բնակութիւն.
der Fußboden տախտակամած.
der Hahn աքաղաղ.
schwer ծանր:

Հրահանգ. 120.

1. Ein Sperling saß auf dem Baume. Der Knabe ist auf den Baum geklettert. Der Hirsch ruhte im Schatten einer Eiche. Joseph ist während einiger Zeit Sklave bei Potiphar (պետաւրէս) gewesen. Die Zugvögel verlassen uns im Herbst (աշնան) und kehren im Frühling zu uns zurück. Die Familie des Grafen B. wohnt auf dem Lande. Der Pfau ist der schönste unter den Vögeln. Der Hund lief einige Male um das Haus (herum) und

[1] Vor յառաջ ցուցընող բառ մը խնդիր ունեցած ատենը միշտ տրական հոլով կ'ուզէ:

suchte seinen Herrn. Die Köchin hat gelbe Rüben (ստեպղին) gekocht, anstatt weißer Rüben. In der Nacht hörte ich einen Schuß; am andern Morgen erfuhr ich, daß mein Nachbar sich erschossen (ապաննած) hatte. Der Knabe sprang im Zimmer herum.

2. Die Damen sind längs des Flusses spazieren gegangen. Vor sechs Uhr werde ich nicht nach Hause kommen; warten Sie lieber bis morgen. Wegen des widrigen (հակառակ) Windes konnte das Schiff den Hafen nicht verlassen. Bei Tagesanbruch (առտու ըլլալուն պէս) gingen Kolumbus und seine Gefährten ans Land und nahmen Besitz (տիրել) von der Insel im Namen des Königs von Spanien. Während dieser Ceremonien versammelten sich die Indianer um die Spanier und betrachteten bald (մերթ) die fremden weißen Männer, bald die schwimmenden Häuser, auf welchen sie über das Meer gekommen waren.

Շարադրութիւն. 121.

1. Պահնակը կարօղի տեղ առի։ Ես քալքէն դուրս կը բնակիմ։ Դղեակը Ռենոսին ափդիի կողմն է (liegt)։ Մեր բնակարանը ծովուն անդիի կողմը տեղաւորուած է (hat sich ... niedergelassen)։ Մենք մեր հօրը դիմացը գացինք։ Կարծքը պէտք է մէկ ամսուան միջոցին մէջ կատարուած ըլլալ։ Ամպերն ամպերէն (Wolken) վեր (վերի կողմն) են։ Ճամբուն երկայնութեանը ծառեր տնկեցին։ Երիտասարդը պաշտօնը (Stelle) ստացաւ (erlangte) իւր հօրեղբօրը ազդեցութեան շնորհիւ։ Լծակի մը միջնորդութեամբ կրնան ամենածանր բեռներ (Lasten) վեր վերցուիլ (aufheben)։ Ես իրեն շատ անգամ(ներ) գրեցի իմ գրանքփոխդ բնակած (Aufenthalt) ժամանակս։

2. Ո՞վ է դրան քովը։ Մուրացկան մըն է։ Այս թուղթը (Karte) դրան վրայ կախեցէք (heften Sie)։ Ձեր գլխարկն ալ ուրիշներուն վրայ է։ Անիկա իւր վերարկուն անկողնոյն վրայ նետեց։ Խակը սովորաբար տան ետեւը կ'ըլլայ (է)։ Թշնամիք քաղքին պարիսպներուն ետեւը կեցան։ Ո՞ւր է ձեր թաշկինակը։ (Անիկա իմ) դրպանս է։ Ան շիշը (իմ) պառկելու խուցս տարէք։ Իմ երեժըշտութեան վարպետս նամակատան քովը կը բնակի։ Այս դիրքը միւսին քովը դրէք (կանգնեցէք)։ Ամպերը մեր գլխոց վրայ կը տատանին (շուեբեն)։ Ձեր զգեստները գետին (տախտակամածին վրայ) մի նետէք։ Իմ տետրակս ձեր դրքերուն մէջ(տեղ)ը գտայ։ Ձեր բազկին տակն ի՞նչ կը տանիք։ Պատկերը մրն է, զոր վարպետս (ցոյց տուաւ) կը տանիմ։ Կառքը տան առջեւն է։ Աքաղաղը լուսնընալէն (Tag) յառաջ կ'երգէ (kräht)։

Խօսակցութիւն։

Seit wann wohnen Sie in dieser Stadt?
Ich wohne schon vier Jahre hier.

Welches ist der schönste unter den Vögeln?
Der Pfau ist der schönste unter den Vögeln.

Wo leben die Löwen und Affen?
In den heißen Ländern.

Wo saß der Kanarienvogel?
Er saß auf dem Dache.

Wohin flog er nachher?
Er flog auf einen Baum.

Wann verlassen die Zugvögel Europa?
Im Herbst, vor dem Anfang des Winters.

Wohin gehen Sie?
In südliche Länder, meistens nach Afrika.

Was hat die Köchin gekocht?
Gelbe Rüben statt Kartoffeln.

Haben Sie meinen Hund nicht gesehen?
Doch, er ist eben um das Haus herumgelaufen.

Wo sind Sie diesen Morgen gewesen?
Ich habe einen Spaziergang längs des Flusses gemacht.

Wann hörten Sie den Schuß?
Mitten in der Nacht.

Wo sind Sie dem Herrn N. begegnet?
Außerhalb der Stadt, gegenüber dem Bahnhof.

Wohin geht der Koch?
Er geht auf den Markt.

Wohin geht der Graf?
Er geht auf das Land.

Wo lebt Ihre Tante?
Sie lebt im Sommer auf dem Lande, im Winter in der Stadt.

Ընթերցուած։

Das zerbrochene Hufeisen. *Կոտրած պայտը։*

Ein Bauer ging mit seinem Sohne, dem kleinen Thomas, in die Stadt. „Sieh", sagte er unterwegs zu ihm, „da liegt ein Stück von einem alten Hufeisen auf der Erde, hebe[1] es auf und stecke es in deine Tasche". — „Bah", versetzte Thomas, „das ist nicht der Mühe wert[2], daß man sich dafür bückt"[3]. Der Vater erwiderte nichts, nahm das Eisen und steckte es in seine Tasche. Im nächsten Dorfe verkaufte er es dem Schmied[4] für drei Heller[5] und kaufte Kirschen dafür.

Hierauf setzten sie ihren Weg fort. Die Sonne war brennend heiß. Man sah weit und breit[6] weder Haus, noch Wald, noch Quelle (աղբիւր). Thomas verging[7] fast vor Durst (ծարաւէն) und konnte seinem Vater nur mit Mühe folgen.

Da ließ dieser, wie durch Zufall[8], eine Kirsche fallen. Thomas hob[9] sie so gierig auf, als wenn es Gold wäre, und

1 aufheben գետնէն վերցընել. 2 աշխատութիւնը չ'արժէր. 3 ծռիլ. 4 երկաթագործ. 5 բնիոն. 6 հեռուէն. 7 vergehen մեռնիլ. 8 ըստ պատահման. 9 անյագաբար.

ſteckte ſie ſchnell in den Mund. Einige Schritte weiter ließ der Vater eine zweite Kirſche fallen, welche Thomas mit derſelben Gierigkeit[10] ergriff. Dies dauerte fort[11], bis er ſie alle aufgehoben hatte.

Als er die letzte verzehrt[12] hatte, wandte ſich der Vater zu ihm hin und ſagte: „Sieh', wenn du dich ein einziges Mal hätteſt bücken wollen um das Hufeiſen aufzuheben, ſo würdeſt du nicht nötig gehabt haben, es hundert Mal für die Kirſchen zu thun".

10 անյագութիւն. 11 շարունակել. 12 ուտել, լափել։

ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆՈՐԴ ԴԱՍ

ՇԱՂԿԱՊ

(Bindewörter.)

Շաղկապն անփոփոխ մասն բանի մ'է, որ կը գործածուի երկու բառ կամ խօսք իրարու հետ կապելու համար։ Խօսքի մէջ ասոնց բային վրայ ունեցած ազդեցութեանը համեմատ չորս դասի կը բաժնենք։

Ա. ԴԱՍ. ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Ասոնք այնպիսի շաղկապներ են, որոնք խօսքի շարադասութեան կարգը չեն փոխեր։ Եւ վեց հատ են՝

und *եւ, ու.*	aber, allein *բայց, սակայն.*
oder *կամ.*	ſondern *այլ, հապա (ՔԽՕՍՔԻՆ ԽՕՍՔԷ ՀԸ ՎԵՐԼԸ).*
denn *վասն զի.*	ſowohl — als *ԹԷ — ԹԷ։*

Օրինակը։

Ich muß zu Hauſe bleiben, denn ich bin krank.
Պէտք եմ տունը մնալ, վասն զի հիւանդ եմ.
Der Strauß hat Flügel, aber er kann nicht fliegen.
Ջայլեամը թեւեր ունի, բայց չի կրնար թռչիլ։

Դիտողութիւնք։

1. Aber *երբեմն անուն բայիէն վերջն ալ կրնայ դրուիլ.*
Der Vater aber ſagte *բայց Հայրն ըսաւ։*

2. Sondern *նախընթաց նախադասութեան մէջ ժխտուած բանի մը հակառակը կը ցուցընէ. ըստ այսմ գոյն ժխտական նախադասութենէ մը վերջը կրնայ գործածուիլ։ Հայերէն՝ այլ, հապա. Օր.*

Ich halte ihn nicht für boshaft, ſondern für närriſch.
Զինքը չար չեմ համարիր, այլ յիմար.

Ich nannte nicht ſeine Tochter, ſondern ſeine Nichte.
Իւր դուստրը չէ զըուցածս, հապա իւր եղբօրաղջիկը.

Ինչպէս օրինակներէն կը տեսնուի, ſondern *ժխտական խօսքէ մը վերջն այն ժամանակ կը գործածուի, երբ իւր գտնուած նախադասութեան մէջ դիմաւոր բայ չկայ կամ ղեղչեալ է. ապա թէ ոչ՝ ժխտական խօսքէն վերջն ալ* aber *կամ* allein *կը գործածուի. Օր.*

Ich habe ihn nicht geſehen, aber ich habe ihm geſchrieben.
Զինքը չեմ տեսած, բայց իրեն գրեցի.
Er iſt noch nicht angekommen, aber (allein) wir erwarten ihn jeden Augenblick.
Անիկա դեռ չէ եկած, բայց ամէն րոպէ իրեն կը սպասենք։

Բ. ԴԱՍ. ՄԱԿԲԱՑԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Ա՛կբայական շաղկապներէն վերջն անուն բային բային եռքը կը դրուի։ Եւ ասոնք են՝

alſo *ուրեմն.*	entweder — (oder) *կամ (կամ).*
auch *նաեւ, ալ.*	ferner *բայց ասկէ, դարձեալ. նաեւ.*
außerdem *ասկէ զատ.*	indeſſen *սակայն եւ այնպէս.*
bald — bald *մերթ — մերթ. երբեմն — երբեմն.*	kaum *հազիւ (ԹԷ).*
da, dann *ան ատեն.*	folglich, mithin } *ըստ հետեւորդի.*
dagegen, hingegen } *ընդ հակառակն.*	nicht nur, nicht allein — ſondern, auch } *ոչ միայն — այլ նաեւ.*
daher, deswegen, darum, deshalb } *անոր համար, ըստ հետեւորդի.*	nicht blos }
demnach *ըստ այսմ.* [*նիւ.*	nichts deſto weniger *այսուամենայնիւ.*
dennoch *սակայն, այսուամենայնայնիւ.*	nun *արդ., ուրեմն. որովհետեւ.*
deſſenungeachtet *սակայն եւ այնպէս, հակառակ . . .*	ſo *այսպէս.*
desgleichen *նմանապէս.*	ſonſt *ապա ԹԷ ոչ, այլապէ.*
deſto, um ſo } *այնչափ աւելի (ԲԱՑԱՏՐ.*	teils — teils *մասամբ — մասամբ.*
doch, jedoch, gleichwohl } *սակայն եւ այնպէս, այսուամենայնիւ.*	überdies *բայց ասկէ.*
	übrigens *դարձեալ, բայց աստի.*
	weder — noch *ոչ — ոչ. [կառակն.*
	vielmehr *մանաւանդ ԹԷ, ընդ հա-*
	zwar *ԹԷպէտ եւ, իրօք որ։*

Օրինակը։

Meine Schweſter iſt krank, alſo (կամ deshalb, deswegen, darum, daher, mithin, folglich) kann ſie nicht abreiſen.
Քոյրս հիւանդ է, ուրեմն (կամ ըստ հետեւորդի, անոր համար) չի կրնար ճամբայ ելլել.
Kaum hatte er dieſes Wort geſprochen.
Հազիւ ԹԷ այս խօսքը զըուցած էր.
Doch (jedoch, indeſſen) war es ſpät geworden.
Ընդ սակայն այսուամենայնիւ ժամանակը ուշացած էր.
Ferner hatte es viel geregnet *ասկէ զատ՝ շատ անձրեւ եկած էր.*

Zwar konnten wir nicht ſehen, wer es war; aber (allein) wir erkannten die Stimme.
Թէպէտ ով ըլլալը չէինք տեսներ, սակայն ձայնը ճանչցանք։

Բառք։

Die Nahrung կերակուր, սնունդ.
der Beſuch այցելութիւն.
die Armut չքաւորութիւն, աղքատութիւն.
verſchwenden վատնել.
die Einſamkeit առանձնութիւն.
die Geſellſchaft ընկերութիւն.
bequem հանգիստ.
der Vorwurf յանդիմանութիւն, կշտամբանք.
Vorwürfe machen յանդիմանել, յանդիմանութիւն տալ։

Հրահանգ. 122.

1. Ich habe den Brief geſchrieben und mein Bruder hat ihn abgeſchrieben. Sie müſſen mir mein Buch zurückgeben oder ein anderes kaufen. Ich kann Sie nicht bezahlen, denn ich habe jetzt kein Geld. Sowohl der Vater als die Mutter haben den Sohn gelobt. Der gerechte Mann ſchadet weder dem Reichen noch dem Armen. Die Ochſen dienen uns nicht nur zur Nahrung, ſondern auch zur Arbeit.

2. Das Klima dieſes Landes iſt weder ſehr warm, noch ſehr kalt. Sie ſind unwohl, alſo (folglich) können Sie heute nicht ausgehen; überdies erwarten Sie den Beſuch Ihres Freundes. Die Aufgabe iſt zwar ſehr ſchwer; indeſſen (jedoch) werde ich ſie machen; ſonſt werde ich eine Strafe bekommen. Kaum war er abgereiſt, (ſo) kam ein Brief von ſeiner Schweſter an.

Շարադրութիւն. 123.

1. Ես դուրս պիտի չերթամ, վասն զի քեռայրիս (Schwager հյց.) կը սպասեմ։ Ոչ ոք արհամարհեցաք, վասն զի բոլոր մարդիկ եղբայր են։ Հիներն ոչ խահուէն կը ճանչնային ոչ թէյը։ Իրն այսպէս ի գլուխ եկաւ (iſt ... ausgemacht)։ Ոչ միայն իւր ստացուածքը (Vermögen է.) վատնեց, այլ ուրիշներուն ալ գողցաւ։ Սիրով կ'օգնէի (թէաչ.) Չեզի, բայց չքաւորութիւնս չի ներեր (զայն) ինծի։ Կամ խեղճ է, [եւ] կամ ըլլալու վրայ (im Begriff es zu ſein) է։

2. Այս մարդը չի կրնար աշխատիլ. մուրալ ալ չ'ուզեր։ Մարդ[ս] չէ սահմանուած գոյատրկ կենալու համար (um müßig zu gehen), այլ աշխատելու համար. ոչ [թէ] առանձնութեան համար, այլ ընկերութեան համար։ Կամ ինքը պիտի մեռնի [եւ] կամ ես։ Այս տունը մեծ չէ, բայց անիկա հանգիստ է։ Դուք

զերար կը սիրէք, եւ սակայն զերար կը յանդիմանէք։ Կարօտս հիւանդ է, այսու ամենայնիւ իւր դործքը կը շարունակէ։

Գ. Դաս. ՅԵՂԱԿԱՐԳ ՇԱՂԿԱՊՆԵՐ

1. Ամէն թէ պարզ եւ թէ բաղադրեալ (տես եր. 256.) յեղակարգ շաղկապները իրար նախադասութեան վերջը կ'ուզեն։ Թէ բայը բաղադրեալ ժամանակ է, օժանդակն ամէնէն վերջը կը դրուի։

ա) Պարզ յեղակարգ շաղկապներ։

Als[1] երբ (որ).
bevor, ehe յառաջ քան.
bis մինչեւ որ.
da[2] որովհետեւ. երբ.
daß որ, թէ.
damit որպէս զի. [որ.
falls, im Fall եթէ, ի դիպուածի
gleichwie ինչպէս որ.
indem' մինչդեռ, երբ. անով որ.
nachdem' ետքը, վերջը.
ob թէ (արդեօք).
obgleich', obſchon' } թէպէտ եւ.
obwohl', wiewohl' }
ſeit կամ ſeitdem' ... ի վեր.
ſobald (als) ընդ (երբ...). իսկ եւ իսկ.
ſo lange (als) ցորչափ որ, քանի որ.
ſo oft (als) քանի անգամ որ.
ungeachtet թէպէտ եւ ...
während մինչդեռ, ... ժամանակ.
wann, wenn երբ.
weil վասն զի, որովհետեւ.
wenn եթէ.
wie ինչպէս (որ).
wofern եթէ (միայն), միայն թէ։

Warten Sie, bis ich meinen Brief vollendet habe.
Պասեցէք, մինչեւ որ նամակս լմնցընեմ.
Ich weiß nicht, ob er ihm geantwortet hat.
Չեմ գիտեր, թէ արդեօք իրեն պատասխանած է։

2. Յեղակարգ շաղկապով մը սկսող նախադասութեան մէջ, բային նախադաս մասնիկը չի բաժնուիր (տես եր. 206, Դիտ. 1)։

Es war vier Uhr, als die Sonne aufging.
Ժամը չորսն էր, երբ արեւը ծագեցաւ։

3. Դարձեալ՝ յեղակարգ շաղկապով մը սկսող նախադասութեանց մէջ գլխաւոր նախադասութեան անուն բային բային վերջը կը դրուի. Օր.

Indem er in das Zimmer eintrat, fing er an zu weinen.
Երբ խուցը կը մտներ, սկսաւ լալ.
Nachdem wir miteinander gefrühſtückt hatten, gingen wir (եւ ոչ թէ՝ wir gingen) ſpazieren.
Մէկտեղ նախաճաշ ընելէն վերջը, պտտելու գացինք.

---

[1] Անցեալ ժամանակով մը.

[2] Այս da ն պէտք չէ շփոթել da = հոն մակբայով, որ բայը նախադասութեան վերջը չի պահանջեր այլ պարզապէս անուն բային բային վերջը կ'ուզէ. զ. օ. da kommt er.

Während wir Karten ſpielten, laſen unſere Freunde (եւ ոչ՝ unſere Freunde laſen) die Zeitungen.
Մեր թուղթ խաղացած ժամանակը, մեր բարեկամները լրագիր կը կարդային։

Դիտողութիւնք։

Als երբ որ· չափ· պէս· եւն։

1. Այս շաղկապը զանազան նշանակութիւնները ունի։ Եթէ նախադասութիւնն իրմով սկսի, երբ, երբ որ կը նշանակէ, եւ բայը նախադասութեան վերջը կը դրուի· Օր·

Als der Prinz in das Zimmer trat —
Երբ որ իշխանը խուցը մտաւ —

2. Բաղդատականէ մը վերջը ան (ը), ...էն (աւելի) կը նշանակէ· Օր·

Karl iſt größer als Ludwig.
Կարոլոս Լուդովիկոսէն աւելի մեծ է· կամ՝
Կարոլոս աւելի մեծ է, քան Լուդովիկոսը։

3. So, ebenſo բառերէն վերջը, ...չափ կը թարգմանուի·

Ich bin nicht ſo gelehrt als du
Ես քեզի չափ գիտուն չեմ։

4. Nichts ժխտական մակբայէն կամ niemandէն եւն· եաքը կը թարգմանուի՝ բայց երէ, ... չոր· Օր·

Nichts als die Wahrheit ճշմարտութենէն զատ ոչինչ·
Niemand als Ihre Tante ձեր հօրաքրոջմէն զատ ոչ ոք։

5. Als կը նշանակէ նաեւ պէս, իբրեւ· Օր·

Als Chriſt իբրեւ քրիստոնեայ·
Er handelte als Vater հօր պէս (հայրաբար) կը վարուէր։

Obgleich, obſchon, obwohl թէպէտ եւ։

Այս երեք շաղկապները մի եւ նոյն բանը կը ցուցընեն։ Առջի մասնիկն ob կրնայ միւս մասէն բաժնուիլ, եթէ իրեն եւ միւս մասին մէջ մէկ կամ երկու դերանուն կը մտնէ· բայց լաւագոյն է չբաժնելը։ Օր·

Obgleich ich ihn nicht kenne *թէպէտ եւ զինքը չեմ ճանչնար·*
Obgleich ich arm bin կամ ob ich gleich (ſchon) arm bin.
թէպէտ եւ ես աղքատ եմ·
Obſchon er mich (ob er mich gleich) kennt.
թէպէտ եւ անիկա զիս կը ճանչնայ։

Ծանօթ· Այս երեք շաղկապներէն՝ ինչպէս նաեւ wenn, (wann), wenn gleich եւ երբեմն da շաղկապներէն եաքը, խօսքին երկրորդ մասը (կամ գլխաւոր նախադասութիւնը) սովորաբար ſo-վ կը սկսի·

Obſchon er erſt dreißig Jahre alt iſt, ſo hat er doch ſchon graue Haare.
Թէեւ հազիւ երեսուն տարեկան է, սակայն արդէն մազերը ճերմկցած են.

Ob er gleich ſelbſt arm war, ſo unterſtützte er doch die Armen.
Թէպէտ եւ ինքն ալ աղքատ էր, սակայն եւ այնպէս աղքատաց կ'օգնէր։

Wenn երբ (որ)· եթէ։

Wenn ով սկսող նախադասութեան մը բայը, եթէ ներկայ կամ յարակատար է սահմանական կը դրուի, իսկ եթէ անկատար կամ դերակատար է ապառքադասական կը դրուի· Օր·

Wenn ich krank bin, liebe ich keine Beſuche.
Հիւանդ եղածատենս այցելութիւններէ չեմ հաճիր·
Wenn ich heute einen Brief erhalte, ſo reiſe ich morgen ab.
Եթէ այսօր նամակ մ'ընդունիմ, վաղը ճամբայ կ'ելլեմ·
Wenn du nicht kommen kannſt եթէ չես կրնար գալ·
Wenn er nicht kommen könnte եթէ չէր կրնար գալ·
Wenn er mir dies früher geſagt hätte.
Եթէ զայս ինծի յառաջուընէ ըսած ըլլար։

Բառք։

der Arbeiter գործաւոր·
der Gipfel գագաթ·
das Gewitter փոթորիկ·
der Kauf գնեն·
die Leutſeligkeit մարդասիրութիւն·
der Übelthäter չարագործ·
die Ruhe հանգիստ· der Stern աստղ·
das Gefängnis բանտ·
die Sicherheit ապահովութիւն·
die Zeichnung գծագրութիւն·
öffentlich հասարակաց·
das Andenken յիշատակ·
die Großmut մեծանձնութիւն·
die Stärke զօրութիւն·
dienen ծառայել·
herannahen մօտենալ·
ausweichen խորշիլ, խոյս տալ·
überfallen յանկարծակի վրայ հասնիլ·
ſtören խանգարել· վրդովել·
übergeben (անբ.) աւանդել, յանձնել·
plündern կողոպտել, աւարել·
fehlen պակսիլ, յանցանք գործել·
gegenwärtig ներկայ։

Հրահանգ. 124.

1. Da der Arbeiter ſehr fleißig war, (ſo) wurde er gut bezahlt. Man weiß nicht, ob die Sterne bewohnt ſind oder nicht. Ich ſchlief noch, als mein Bedienter ins Zimmer trat. Sobald (als) ich den Brief empfangen hatte, reiſte ich ab. Kaum hatten wir den Gipfel des Berges erſtiegen (ելած), als das Gewitter losbrach (սկսաւ). Die Soldaten plünderten die Stadt, bis der General ihnen ein Ziel ſetzte. Es iſt ein leichter Kauf, wenn Freunde durch Leutſeligkeit gewonnen werden.

2. Die gegenwärtige Zeit iſt die beſte, weil ſie unſere eigene iſt. Wenn man die Gefahr herannahen ſieht, ſo kann man ihr ausweichen; aber wenn ſie uns ſchlafend überfällt, (ſo) wird ſie uns ſicherlich verderben. Ehe man ein neues Kleid anzieht, muß

man die Hände rein waſchen. So lange als die Menſchen geſund ſind, denken ſie ſelten (daran), daß ſie auch krank werden können. Die Uebelthäter werden in die Gefängniſſe gebracht, damit ſie die öffentliche Ruhe und Sicherheit nicht mehr ſtören. Sie müſſen mit uns ſpeiſen, ehe Sie unſere Stadt verlaſſen.

Տարադրութիւն. 125.

1. Կ'ապահովեմ զձեզ՝ որ Ձեր բարեկամն եմ: Երբ որ կու գաք Ձեր գծագրութիւնները ինձի բերէք: Ամէն մարդ գիտէ, որ Կրեսոս հարուստ էր: Դուք դուրս պիտի չերթաք, վասն զի հիւանդ էք: Եթէ տղան շատ կերած չըլլար, հիւանդ չէր ըլլար (թէպէտ.): Մեր աշխատած ժամանակ (մինչդեռ մենք կ'աշխատէինք) դուք կ'երգէիք: Եթէ կ'ուզէք երջանիկ ըլլալ, առաքինութիւնը սիրեցէք եւ մոլութիւնէն փախչիք: Պէտք է իր թշնամացը ներել, վասն զի Աստուած նոյնը կը հրամայէ:

2. Առիւծը մեծանձնութիւնը սիգութեան (Stolz) եւ զօրութեան հետ կը միացընէ, մինչդեռ վագրը վայրենի եւ անգութ է: Պէտք էիք աշխատիլ, փոխանակ Ձեր ժամանակը պարկութեամբ (Nichtsthun) անցընելու: Երբ որ եկաւ, կապոյն (das Päckchen) իրեն յանձնեցի: Որովհետեւ յանցանք գործեց՝ պիտի պատժուի: Թէպէտ եւ հարուստ ենք, այս ծախքերը (Ausgaben) չենք կրնար ընել: Թէպէտ եւ աղքատ է, սակայն պատուաւոր մարդ մըն է: Նախաճաշ ընելէն ետքը (nachdem), դեպ ի Բարիզ ճամբայ ելայ:

ԺԱ) Բաղադրեալ յեղակարգ շաղկապներ:

Ահա շաղկապներն երկու զոյգ զոյգ բառերէ կազմուած են: Հոս քանի մը հատ միայն կը դնենք աշակերտին յիշողութիւնը չծանրացընելու համար:

als ob', als wenn, wie wenn	այնպէս... որ, իբրեւ թէ (սոքրտ. ասկո-ով).
als daß	այնպէս... որ չ..., բայց եթէ (որ).
anſtatt daß	փոխանակ (գրել)ու.
bis daß	մինչեւ որ.
im Fall daß	ի դիպուածի որ.
je — (deſto)	այնչափ — որչափ.
je nachdem	ըստ որում.
ohne daß	առանց.
ſo daß	այնպէս որ.
ſo...auch, ſo ſehr...auch, wie...auch	թէպէտ եւ. որչափ ալ (որ). որչափ... ալ.
ſo wie, gleich wie	ինչպէս որ, ինչպէս նաեւ.
†wofern...nicht, †wenn...nicht	քանի որ չ..., եթէ չ...
†wenn...auch, †wenn...gleich, †wenn...ſchon, †wenn...nur	թէ եւ, թէպէտ եւ. եթէ միայն.
um...zu	(անէր-ով) համար:

Ծանր. Auf daß որպէս զի եւ eß ſei denn, daß բայց եթէ շաղկապները հնացեալ են:

Դիտող. Խաչով մը նշանակուած շաղկապներուն քով, անուն բային կամ անձնական դերանուններէը՝ շաղկապը կագմող երկու մասանց մէջ կը մտնեն: Նոյնպէս կ'ըլլայ ſo...auch, ſo ſehr...auch, wie...auch շաղկապներուն քովէն ալ: Օր.

Wenn er auch alt iſt թէեւ ծեր ալ է.
Wofern er mich nicht bezahlt քանի որ ինծի չի վճարեր.
So reich er auch iſt, ſo iſt er doch nicht glücklich.
Որչափ որ ալ հարուստ է, սակայն երջանիկ չէ:

Դ. Դաս. ԾԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Հարցական մակբայներն անուղղակի հարցմանց մէջ յարաբերեալ շաղկապներ կ'ըլլան, եւ բայը նախադասութեան վերջը կ'ուղեն: Եթէ բայը բաղադրեալ ժամանակ է, օժանդակն ամենէն վերջը կը դրուի: Ասոնք են.

Warum, weshalb, weswegen, wann, wie, wieviel,	wie lange, wo, woher, wohin, wodurch, womit,	worin, woran, wobei, wovon, worauf, worunter եւն.:

Ich weiß nicht, warum er meinen Brief nicht beantwortet hat.
Sagen Sie mir, wie lange Sie auf dem Balle geblieben ſind.
Iſt dies das Haus, wovon Sie geſtern geſprochen haben?
Fragen Sie ihn, wann ich ihn zu Hauſe finden werde.

Բառք:

Die Unruhe	անհանգստութիւն.
ungeſchickt	անյաջողակ.
laſterhaft	մոլի, կրքոտ.
die Beleidigung	թշնամանք.
das Stillſchweigen	լռութիւն.
beobachten	պահել.
erlangen	ձեռք բերել.
das Löſegeld	փրկանք.
drohen	սպառնալ.
wiegen	կշռել.
liſtig	նենգաւոր. խորամանգ.
verrückt	յիմար. խելագար.
ſtolz	ամբարտաւան. սեգ.
der Leſer	ընթերցող.
ſich ermüden	յոգնիլ.
die Beredſamkeit	ճարտասանութիւն.
einwilligen	հաւանիլ. միաբանիլ.

Հրահանգ. 126.

1. Es ſcheint mir, als ob ich dieſen Herrn ſchon geſehen hätte. Dieſer junge Menſch iſt ſehr ungeſchickt; er nimmt nie etwas in die Hand, ohne daß er es zerbricht. Wir können dieſe Aufgabe nicht machen, wenn ſie uns nicht helfen. Du wirſt belohnt werden, je nachdem du fleißig biſt. Je lebhafter die Menſchen ſind, deſto mehr Unruhe haben ſie. Dieſe Beleidigung iſt zu groß, als daß ich das Stillſchweigen beobachten könnte. Er hat mir nichts geſchrieben, als daß ſeine Geſchäfte gut gehen.

2. Der Gefangene wird seine Freiheit nicht erlangen, es sei denn, daß er ein hohes Lösegeld bezahle. Je kälter die Luft ist, desto mehr wiegt sie; je wärmer sie ist, desto leichter ist sie; deswegen strebt (կը ձգտի) die warme Luft immer aufwärts. Mein Feind hat mich sehr beleidigt, als daß ich ihm verzeihen könnte. Wie groß auch der Ruhm dieses Fürsten sein mag, der seines Vaters war noch größer. Je mehr Sie mir drohen, desto weniger werde ich Ihnen gehorchen. Selbst wenn er Unrecht hätte, er will es nicht eingestehen.

Տարաղրութիւն. 127.

1. Ա՛ինպէս կ'երեւայ (er sieht aus) որ զիս խաբել կ'ուզէր: Մեռած տղան իւր անկողնոյն վրայ [այնպէս մը] կը պառկէր (lag), իբրեւ թէ կը քնանար: Ա՛ինչափ շատ զիս վշտացուց, որ չեմ կրնար (ԽԲ. ԱՆ.) իրեն ներել: Որչափ խրատանդ ալ ըլլայ, սակայն եւ այնպէս քիչ (weniger) խրատած է: Որչափ գիտուն ալ ըլլաք (ԱՀՄ.), դեռ շատ բան (յԹ.) չէք գիտեր: [Ա՛ինպէս մը] կը խօսէր, իբրեւ թէ խելագար ըլլար: Որչափ աւելի գիտուն է, այնչափ աւելի կը հպարտանայ (հպարտ կ'ըլլայ): Թէ եւ դեռ շատ երիտասարդ է, սակայն յուսալու պատճառ մը կայ (ist doch Grund vorhanden zu...), որ աղէկ գործքեր (Geschäfte) պիտի գործէ: Ա՛նիկա եկած է, Ձեր ստակը վճարելու համար:

2. Ձեզ կուչեցի, ոչ թէ ինձի հակառակ գործելու համար (um mir zuwider zu handeln), հապա իմ հրամաններուս հնազանդելու համար: Կարդացողներուն (ՈՒՂՂ.) մեծագոյն մասը կը կարդան եւ կը ձանձրանան (ermüden sich), մինչեւ որ վերջը հասնին (յՒՒ.): Դուքսն իւր որդւոյն ճարտասանութեանը վրայ (ՀՅՅ.) կը զարմանար, "եթէ միայն չափազանց չըլլայ բանը (...nicht zu viel sagt)", կը զըւցեր ինք իրեն (dachte er): Իրեն պիտի չընկերանամ, եթէ հրաժեշտ տալու (um Abschied zu nehmen) չգայ: Ձեզ պիտի չմոռնանք ճամբայ ելլելու, եթէ հայրերնիդ չհաւանի: Կ'ուզեմ իրեն շատ սիրով (wohl) գործք տալ, եթէ միայն ինձի աղէկ ծառայէ (bedienen ՀՅՅ. ՈՎ.):

Խօսակցութիւն:

Können Sie diese Arbeit vollbringen?	Nicht ohne daß Sie mir helfen.
Wird der Arbeiter belohnt werden?	Ja, wenn er fleißig ist.
Wurde der Gefangene freigegeben?	Ja, nachdem er ein hohes Lösegeld bezahlt hatte.
Sind Sie gestern spazieren gegangen?	Ja, obschon es geregnet hat.
Ist Herr M. ein gelehrter Mann?	Er ist sehr gelehrt, dessenungeachtet ist er nicht stolz.
Warum soll ich diese Aufgabe noch einmal schreiben?	Damit du sie besser lernst.
Kennen Sie mich?	Nein, aber es scheint mir, als ob ich Sie schon gesehen hätte.
Ist es gesund, lange zu schlafen?	Nein, je länger man schläft, desto träger wird man.
Wird der Lehrer ihm verzeihen?	Nicht eher, als bis er sich bessert.
Haben Sie mich hier erwartet?	Keineswegs; um so mehr freue ich mich, Sie hier zu finden.
Wird der Fürst hier bleiben?	Ich zweifle, ob er hier bleibt.
Soll ich Ihnen Ihr Buch zurückschicken?	Je eher Sie es thun, desto angenehmer wird es mir sein.
Ist der Kranke aufgestanden?	Ja, ungeachtet der Arzt es ihm verboten hatte.
Wissen Sie, warum er nicht kommt?	Er hat es mir nicht gesagt.

Ընթերցուած:

Alexander in Afrika.

Alexander der Große kam einst in eine entlegene[1], goldreiche Gegend von Afrika; die Einwohner gingen ihm entgegen und brachten ihm Schalen[2] dar, voll goldener Aepfel und Früchte. — „Ißt man diese Früchte bei euch?" sprach Alexander; „ich bin nicht gekommen, eure Reichthümer zu sehen, sondern von euren Sitten (առաքինութիւն) zu lernen". — Da führten sie ihn auf den Markt, wo ihr König Gericht[3] hielt[3].

Eben trat ein Bürger vor und sprach: „Ich habe, o König, von diesem Manne ein Grundstück[4] gekauft, und als ich den Boden durchgrub[5], fand ich einen Schatz; dieser ist nicht mein; denn ich habe nur das Grundstück gekauft, nicht den darin verborgenen Schatz, und doch will ihn der Verkäufer nicht wieder nehmen". — Und sein Gegner[6] antwortete: „Ich bin ebenso gewissenhaft[7], als mein Mitbürger[8]. Ich habe ihm das ganze Feld verkauft und also auch den Schatz".

Der König wiederholte ihre Worte, damit sie sähen, ob er sie recht verstanden hätte. Dann sprach er: „Du hast einen Sohn, Freund?" — „Ja". — „Und du eine Tochter?" — „Ja". — „Eure Kinder lieben sich?" — „O sehr!" — „Nun wohl! ver-

1 հեռաւոր. 2 տաշտ. 3 դատ կտրել. 4 երկիր. 5 պեղել 6 հակառակորդ. 7 խղճամտ. 8 քաղաքակից.

heiratet[9] eure Kinder, und gebet ihnen den gefundenen Schatz zur Heiratsgabe[10]! Das iſt meine Entſcheidung[11]!"

Alexander erſtaunte, da er dieſen Ausſpruch hörte: „Habe ich unrecht (գէշ) gerichtet[12]," ſprach der König, „daß du alſo erſtaunſt?" „O nein", antwortete Alexander, „aber in unſerem Lande würde man anders richten." — Und wie denn?" — „Die Wahrheit zu geſtehen[13]", antwortete Alexander, „wir würden den Schatz für den König in Beſitz genommen haben".

Da wunderte ſich der König und ſprach: „Scheint[14] denn bei euch auch die Sonne? Und läßt der Himmel auch auf euch regnen?" — Alexander antwortete: „Ja". — „Dann[15] muß es", fuhr er fort, „der unſchuldigen Tiere wegen ſein, die in eurem Lande leben; denn ſolche Menſchen verdienen keine Sonne und keinen Regen".

9 ամուսնացընել. 10 օժիտ. 11 վճիռ. 12 դատել. 13 խոստովանիլ. 14 ծագել. 15 ան առեն։

ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Միջարկութիւնները անփոփոխ բառեր են, որոնք հոգւոյ այլ եւ այլ զգացումները յայտնելու կը գործածուին։ Առնք մեծաւ մասամբ բնական ձայներ են, բայց կան նաեւ քանի մը բառէ կազմուած յայնակերպական բացատրութիւններ։

ah! ach! ei! ա՛հ, ո՛հ, այ.	au! (ցաւէ) ա՛յ, վա՛յ.
ach! ա՛խ, վա՛հ, աւա՛ղ.	hu! (զարմացման) հո՛ւյ, վա՛յ.
he! he da! ei! է՛, հէ՛, ինծի նայէ.	bah! (արհամարհելով) բա՛.
oh! ho! ա, ո՛հ.	potz! բա՛րէ.
oh wehe! աւա՛ղ, բա՛րէ, վա՛շ.	potztausend! անիծեա՛լ.
pfui! վա՛յ, ամօթ.	st! still! լռե՛ա, լռութի՛ւն.
halt! կեցի՛ր. բաւ է.	leider! աւա՛ղ, եղո՛ւկ.
holla! ա՛յ, հէ՛յ, ինծի նայէ.	wie! was! (զարմացման) է՛ՙ.
Ja wohl! այնպէս, այո՛, իրա՛ւ.	heißa! juchhe! հո՛ւռրա. կեցցէ. ա՛ն.
wohlan! auf! auf denn! } օն, հապա, արի՛.	hm! հրմ.
Achtung! զգուշութի՛ւն.	nun hört! արդ միա դրէք.
o Wunder! վա՛յ սքանչելեացս.	Gottlob! փառք Աստուծոյ.
Heil! hoch! կեցցէ՛.	recht so! շա՛տ լաւ.
Wehe! (սպառնալիք) վա՛յ.	vorwärts! յառա՛ջ.
sachte! համայ, հանդա՛րտ.	zu Hilfe! օգնութի՛ւն.
weg da! մէկդի՛.	Himmel! ո՛հ երկինք.
ort! կորսուէ, գնա՛.	o der Schande! ո՛հ, ինչ ամօթ.
	Glück zu! բարի յաջողութի՛ւն։

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ա. ԽԱՌՆ ԾԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ[1]

ԴԻՒՐԻՆ ՀԱՐՑՄՈՒՆՔ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆՔ

1. aufenthalt

Եղբայր մ'ունիմ։ Ես երկու եղբայր ունիմ։ — **Քոյր մ'ալ ունիմ։** Ոչ, քոյր չունիմ։ — **Ձեր գիրքն ո՞ւր է։** Հոս է։ — **Կարծես ո՞ւր է։** Անիկա մահճին է։ Այո, անիկա շատ մտադիր է։ — **Պարտէզը մե՞ծ է։** Պարտէզը շատ մեծ է։ — **Տունը նո՞ր է։** Տունը նոր չէ, (անիկա) հին է։

2.

Ո՞վ բարի է։ Հայրը բարի է, մայրը բարի է։ — **Ո՞վ փութաջան է։** Աշակերտը փութաջան է. աշակերտուհին ալ փութաջան է։ — **Երկիրն ի՞նչ է։** Երկիրը գունդ (eine Kugel) մ'է։ — **(Անիկա) ի՞նչ ձեւ ունի։** (Անիկա) կլոր է։ — **Արեգակն ի՞նչ է։** Արեգակը հրեղէն գունդ (Feuerkugel) մ'է։ — **Շունն ի՞նչ է։** Շունը հաւատարիմ է։ — **կատուն ինչպէս է։** կատուն խաբեբայ (falſch) է։ — **Աստուած ի՞նչ է։** Աստուած աշխարհքի արարիչն է։

3.

Ձին գեղեցի՞կ է։ Այո, անիկա շատ գեղեցիկ է։ — **Այս գաւազանը որո՞ւն է (կը վերաբերի)։** (Անիկա իմ) եղբօրս է։ — **Ձեր հայրը շուն մ'ունի՞։** Անիկա երկու շուն ունի։ — **կեռասները հասա՞ծ են։** Այո, անոնք հասած են։ — **Այս խնձորը հասա՞ծ է։** Անիկա դեռ հասած չէ։ — **Ո՞րոնք են չորս տարրները (Elemente)։** Չորս տարրներն են՝ հուր, ջուր, հող (die Erde) եւ օդ։ — **Ձմեռն ինչպէս է։** Ձմեռը ցուրտ է։ — **Ամառն ինչպէս է։** Ամառը տաք է։ — **Որո՞նք են տարւոյն չորս եղանակները։** Տարւոյն չորս եղանակներն են՝ գարուն, ամառ, աշուն եւ ձմեռ։

---

1 Ա՛ս շարադրութիւնք ԻԳ. Դասէն սկսեալ կրնան հետզհետէ առնուիլ։

4.

Ինչպէս է եկեղեցւոյ աշտարակը: Անիկա շատ բարձր է: — Դղեակին գաւիթն ինչպէս է: Անիկա լայն եւ չորեքանկիւն (viereckig) է: — Որն է Թուչնոց թագաւորը: Արծիւն է: — Ով էր Հերմէս (Merkur): Հերմէս՝ չաստուածներու բանբերն ու վաճառականաց չաստուածն էր: — Ինչպէս կը կոչուի մանկութիւնը (die Jugend): Անիկա կը կոչուի (man ով) կենաց գարունը: — Իսկ (und) ծերութիւնը ինչպէս կ'անուանուի: Անիկա կը կոչուի կենաց ձմեռը: — Ձեր շարադրութիւնը դժուար է: Ես զանիկա դժուար չեմ գտներ: — Կարող մ'ունիք: Ոչ, չունիմ: Կերակուրը (die Nahrung) ինչ կ'ընէ: (Անիկա) մարմինը կը զօրացընէ (ſtärkt):

5.

Հիւանդ ես, Հենրիկոս: Ոչ, ես հիւանդ չեմ, բայց շատ յոգնած եմ: Ինչու այսպէս ախոյր ես: Հայրս հիւանդ է: — Ձեր գրացին հարուստ է: Անիկա յառաջագոյն հարուստ էր, հիմայ աղքատ է: — Տէր Մարտինոս (Martin) եկած (հասած) է: Այո, տէր իմ, անիկա եկած է: — Անիկա երբ հասաւ: (Անիկա) երեկ երեկուն հասաւ: — Ժամը քանին: Ժամը վեցին: — Ինչ ունիք հոն: Երկաթագրիչ (Stahlfeder) մ'ունիմ: — Եղբայրնիդ ինչ ունի: Անիկա կապարագրիչ մ'ունի: — Ինչ գնեցիք: Ձոյգ մը ձեռնոց գնեցի:

6.

Շատ բարեկամներ ունիք: Ես քիչ բարեկամ (յօ.) ունիմ: — Գինի ունիք: Ոչ, գինի չունիմ: — Ինչ ունիք ուրեմն: Գաւաթ մը ջուր ունիմ: — Խաղալու բաղձանք (Luſt) ունիք: Բաղձանք արդէն (wohl) ունիմ, բայց ժամանակ չ[ունիմ]: — Ձոյգ մը կօշիկ պիտի ընդունիմ: Ձոյգ մը կօշիկ եւ զոյգ մը մուճակ պիտի ընդունիմ: — Իրաւունք ունիմ: Այո, իրաւունք ունիք: — Ով իրաւունք չունեցաւ: Փրեդերիկոս իրաւունք չունեցաւ: — Ինչ ունիք ընելու: Ընելու բան մը չունիմ: — Ընելու բան մ'ունիք: Շարադրութիւնս պիտի շինեմ (ըլմ. Ես շարադրութիւնս ունիմ շինելու): — Ձեր եղբայրն ընելու ինչ բան ունի: Անիկա նամակ պիտի գրէ (ըլմ. նամակ մ'ունի գրելու): — Ձեր մատանին գտաք: Ձայն գտայ: — Ո՞ւր էր անիկա: Պարանին (Schrank ար.) տակն էր: — Ինչ կ'ուզէք գնել: Գաւազան մը կ'ուզեմ գնել: — Ով երջանիկ է: Անիկա, որ գոհ է: — Ով դժբախտ է: Անիկա, որ ժլատ է:

7.

Լաւ մը գնեցիք: Թէյ գնեցի: Ֆունտը (das Pfund ֆունտն է) ո՞րչափ կ'արժէ: Ֆունտը երեք ֆիորին կ'արժէ: — Ես ձայն շատ սուղ կը գտնեմ: — Ասիկա ածան[1] է: — Ձեր ձին ծախեցիք. Ձայն գեռ չծախեցի: — Ձանիկա ծախիք պիտի: Կարելի է որ ծախեմ (ըլմ. Թերեւս պիտի ձայն ծախեմ): — Ինչո՞ւ կ'ուզէք ձայն ծախել: Որովհետեւ ստակի հարկաւորութիւն ունիմ[2]: — Կ'ուզէք գինի խմել: Ձով ջուր[ը] լաւագոյն կը համարիմ[3]: — Ինչ կ'ըսէք: Խան մը[4] չեմ ըսեր: — Որո՞ւն հետ կը խօսիք: Տղոյս հետ կը խօսիմ: — Ինչ բան մարմնոյ գեղեցկութիւնը կը բարձրացընէ: Հոգւոյ գեղեցկութիւնը:

[1] wohlfeil կամ billig. [2] հարկաւորութիւն ունիմ ich brauche (հյ.-ով). [3] ich ziehe . . . vor. [4] gar Nichts.

8.

Տարին ինչպէս կը բաժնեն[1]: Ձայն տասներկու ամսուան վրայ (in) կը բաժնեն: — Քանի՞ տարի (յօ.) մէկ դար կը կազմէ (յօ.): Հարիւր տարի մէկ դար կը կազմէ (յօ.): — Երկիրն իւր լոյսն ուստի՞ կ'առնու[2]: Երկիրն իր լոյսն արեւէն կ'առնու: — Որո՞ւն համար կը գնէք այս խաղը: Ձանոնք պզտիկ հօրեզբօրաղջկանց համար կը գնեմ: — Քաղքին դռները գո՞ց[3] են: Այո, գոց են: — Այս գլխարկն որո՞ւն է: Անիկա ան պզտիկ տղուն է: — Հարուստները միշտ երջանի՞կ են: Հարստութիւնը երջանկութիւն[4] չի տար: — Աղէկ կրթութիւն[5] մը բարեբարութիւն մըն է: Անիկա ամենամեծ բարեբարութիւնն է: — Ամէն գրքեր աղէ՞կ են: Ոչ, կան (es giebt) աղէկ եւ գէշ գրքեր:

[1] teilt man. [2] erhält. [3] geſchloſſen. [4] das Glück. [5] Erziehung է՛.

9.

Ձեր գլխուն վրայ (über Ihren) ինչ կը տեսնէք: Երկինքն ու աստղները կը տեսնեմ: — Ինչ կը տեսնուի (man ով) այս երկրիս (Land) մէջ: Հոն կը տեսնուին մեծ գետեր, մեծ լճեր եւ բարձր լեռներ: — Դաշտերը պտղաբե՞ր են: Դաշտերուն մեծագոյն մասը պտղաբեր է: — Գերմանացի գեղացիներն աշխատասէ՞ր են: (Անոնք) շատ աշխատասէր են: — Աղէկ ծառ մը ինչ յառաջ կը բերէ (bringt . . . hervor): Աղէկ ծառ մը աղէկ պտուղներ յառաջ կը բերէ: — Ո՞ւր կը գտնուին անուշահոտ[2] ծաղիկներ: (Անոնք) պարտէզներու մէջ եւ լեռներու վրայ կը

[1] arbeitſam. [2] wohlriechend.

գանուէն։ — Շար ընկերութեան վրայ ի՞նչ կը զրուցեն (man ով)։ Շար ընկերութիւնը բարին չար[1] կ'ընէ եւ չարը չարագոյն։

[1] schlimm.

10.

Այս մարդը շատ խելք ունի՞։ Անիկա շատ խելք ունի, բայց քիչ ատակ։ — Թարգմանութեանս մէջ սխալ (յո.) ունիմ։ Դուք Ձեր թարգմանութեանը մէջ շատ սխալ ունիք։ — Փերդինանդոսին տետրակն ոգր է։ Սեղանին վրայ է։ — Այս ափուզն[1] որո՞ն է։ Անիկա Յուլիոսին (Julius) կամ Հենրիկոսին է։ — Այս պտուղը կը ճանչնա՞ք։ Անիկա խոզկաղին[2] մրն է։ — Այս պտուղը ո՞ր ծառէն է։ Խոզկաղինը կաղնւոյ պտուղն է։ — Ժամանակն ոսկւոյ չափ (ebenſo . . . als) թանկագի՞ն է։ Ժամանակն աւելի թանկագին է քան ոսկին ու արծաթը։ — Մեղրածուծը մե՞ծ թէ (oder) պզտիկ է։ Ամենապզտիկ թուչունն է։

[1] Ball արբ. [2] Eichel արբ.։

11.

Այս տանձը պիտի չուտե՞ս։ Ոչ, զանիկա պիտի չուտեմ։ — Աղէկ գրիչներ ունէի՞ք։ Մեր գրիչները շատ աղէկ էին, — թանաք չունէի՞ք։ Ոչ, թանաք չունէինք։ — Արդէն ճաշեցի՞ք։ Այո, տէր իմ, ես կերած եմ։ — Եղբ հասաք։ Մենք երէկ առտու հասանք։ — Ի՞նչու չես խմեր։ Խմելու բան մը չունիմ եւ ծարաւ [ալ] չունիմ։ — Կ'ուզե՞ս կորոյդ ինծի փոխ տալ։ Զայն կորսնցուցած եմ։ — Ո՞րչափ տակի հարկաւորութիւն ունիք։ Ես 8 մարգի (Mark) հարկաւորութիւն ունիմ։ — Ա՞ս ակուաեղներն[1] ով կոտրած է։ Աղախինը կոտրած է զանոնք։ — Ձեր տղոյը վրայ գո՞հ էք։ Այո, անոնք շատ փութաջան են։ — Ի՞նչ կ'ընէիր (պչ.) իմ տեղս (an meiner Stelle)։ Անմիջապէս[2] ճամբայ կ'ելլէի (պչ.), եթէ ձեր տեղն ըլլայի։

[1] Scheibe էգ. [2] gleich.

12.

Փրեդերիկոսին քերականութիւնը քա՞մս է։ Այո, ձեր քամ է։ — Ծաղիկ (յո.) ժողվեցի՞ք։ Այո, վարդ (յո.) եւ մեխակ[1] ժողվեցի։ — Խնձո՞ր մը թէ տանձ մը կերար։ Տանձ մը կերայ։ — Պզտիկ աղջիկը գլխարկ մ'ունի՞։ Այո, անիկա յարդէ (Stroh-) գլխարկ մ'ունի։ — Տղաք հաց ունեցա՞ն։ Անոնք հաց եւ կեռաս (յո.) ունեցան։ — Ձեր հայրն ո՞ր է։ Անիկա հոս չէ.

[1] Nelken յո.

բայց մայրս հոս է։ — Ծառը բարձր է։ Այո, (անիկա) շատ բարձր է, անիկա երեսուն մեթր (Meter) բարձր է։ — Ընկերոջները քիչ մը վերջը (bald) կը (էջմ. պիտի) հանդի՞ն (reiſ ſein)։ Ամէն մը յառաջ չեն հանդիր (էջմ. պիտի չհանդին). բայց խաղընկերն արդէն հասած են։ — Ձեր եղբարց գլխարկները սե՞ւ են։ Ոչ, անոնք գորշ[1] են։ — Ձեր շարագրութիւնները միշտ դիւրի՞ն են։ Ոչ, երբեմն[2] շատ դժուար են։

[1] grau. [2] manchmal.

13.

Իւրաքանչիւր մարդկան առաջին պարտքն (Pflicht էգ.) ո՞րն է։ (Die iſt) ծառայել Աստուծոյ։ — Մարդուն ճշմարիտ փառքը[1] յորմէ՞մ կը կայանայ[2]։ Առաքինութեան վրայ (in) կը կայանայ։ — Զանձրութեան[3] դէմ լաւագոյն միջոցն[4] ի՞նչ է։ Զբաղումն[5] է։ — Իտալիան ի՞նչպէս կը կոչուի։ Անիկա Եւրոպայի պարտէզը է։ — Իտալիան ի՞նչպէս կը կոչուի։ — Ի՞նչ բանէ (ձյց.) պէտք է խորշիլ։ Ինչ որ առողջութեան վնասակար[6] է։ — Ցամաք երկիրը[7] ի՞նչպէս կը բաժնուի։ Հինգ մասանց (in . . .) կը բաժնուի, որոնք հինգ մասունքն երկրի (Weltteile) կը կոչուին (man . . .)։ — Ո՞ր անասուններն մարդուն անհրաժեշտ (notwendig) են երկրագործութեան[8] համար։ Ձիերը, կովերն ու եզերը։

[1] Ruhm արբ. [5] beſteht. [3] Langweile էգ. [4] Mittel չ. [5] Beſchäftigung էգ. [6] ſchädlich. [7] Feſtland չ. [8] Ackerbau արբ.։

14.

Մեղուներն ի՞նչ կը շինեն։ Անոնք մեղր եւ մո՞մ[1] կը ժողվեն եւ կը պատրաստեն։ — Լիւկուրկոսին (Lykurg) օրէնքներն ի՞նչպէս էին։ Անոնք բոլոր Յունաստանէն շատ յարգուած էին։ — Ո՞վ էր Կոդրոս (Codrus)։ Կոդրոս Աթենացւոց վերջին թագաւորն էր։ — Ամերիկա որմէ՞ գտնուեցաւ։ (Անիկա) Քրիստոփոր (Chriſtoph) Կոլոմբոսէն գտնուեցաւ։ — Գաղղիական գինիները աղէկ են։ Այո, (անոնք) շատ աղէկ են. անոնք գերմանական գինիներէն աւելի աղէկ են։ — Ամենալաւ խահուէն ուսկի՞ց կու գայ։ Ամենալաւ խահուէն Արաբիայէն կու գայ։ — Սաքսոնիայի մայրաքաղաքն ո՞րն է։ Սաքսոնիայի մայրաքաղաքը Տրեզդէն (Dresden) է։ — Ո՞վ յաղթուեցաւ կեսարէն։ Պոմպէոս (Pompejus)։ — Կուստաւ Ադոլֆ թագաւորն ո՞ւր սպանուեցաւ։ Անիկա Լիւցէնի (bei Lützen) պատերազմին մէջ սպանուեցաւ։ — Քանի՞ տարեկան (in . . .)։ 37 տարեկան (Հասակին մէջ)։ —

[1] das Wachs.

պաշարուած (belagert) քաղքին վախճանն[2] ինչ եղաւ: Յարձակմամբ (mit Sturm) առնուեցաւ:

[2] der Schickſal.

15.

Ի՞նչ կը խնդրէք: Բան մը չեմ խնդրեր: — Հոդ (da) ինչ կը փնտռէք: Խոյրս կը փնտռեմ: — Ի՞նչ կ'ուզէք ընել: Նամակս կ'ուզեմ կնքել[1]: Հոդ ինչ կ'ընէք: Շարադրութիւնս կ'օրինակեմ: — Դասս կը սորվիմ: — Ասիկա պիտ'որ ընէք: Զայն սիրով (հաճութեամբ) պիտ'որ ընեմ: — Գիտէք՝ թէ արդեօք պիտի դայ: Այո, (զայն) գիտեմ: — Անոր վրայ (davon) բան մը չեմ գիտեր: — Ասիկա ինչ բսաւ Ձեզի: (Զայն) պիտի չըսեմ Ձեզի: — Ձեր կարծիքն ինչ է: Ձեզի կարծեկից (Ձեր կարծիքէն «եմ.) եմ: — Ա՛ս մարդը կը ճանչնաք: Զինքը շատ աղեկ կը ճանչնամ: — Զինքը չեմ ճանչնար: — Ի՞նչպէս կ'ըսեն սոր (wie nennen Sie das?): Անոր կ'ըսեն...: — Ասոր (հյց.) կը հաւատաք: Անոր չեմ հաւատար: — Իրեն վրայ գո՞հ էք: Ոչ, իրեն վրայ ժժգոհ եմ: — Գո՞հ[2] եղաք: Գոհ եղանք:

[1] ſiegeln. [2] befriedigt.

16.

Ծիծառներն[1] ինչո՞ւ կը սիրուին: Որովհետեւ ճանճերը[2] կ'ուտեն: — Շերամ[3] ինչ կ'ուտեն: Թթենւոյ (յժ.)[4] տերեւները կ'ուտեն: — Ցուրտն որո՞ւն կը վնասէ: Ցուրտը ծաղկանց եւ ծառերու կը վնասէ: — Վաճառականները սովորաբար ինչ բանի վրայ կը խօսին: Անոնք սովորաբար առուտուրի եւ վաճառաց[5] վրայ կը խօսին: — Ուսուցիչն ինչ կ'ընէ: Կը սորվեցնէ: — Աշակերտք ինչ կ'ընեն: Կը սորվին, կը կարդան եւ կը գրեն: — Գրիչներն ինչ բանի կը ծառայեն: Գրելու կը ծառայեն: — Գործել[6] չուզողն ինչ(պէս) կը կոչուի: Ծոյլ կը կոչուի:

[1] die Schwalbe. [2] die Fliege. [3] Seidenwurm. [4] Maulbeerbaum. [5] die Waare. [6] ſich beſchäftigen.

17.

Եթէ Ձեր ընկերին ծառայէք, անիկա ինչ պիտ'որ ընէ իր կողմանէ (ſeinerſeits): Անիկա ալ Ձեզի պիտի ծառայէ: — Կալիպսէ[1] դիցուհին[2] ինչ բսաւ Տելեմաքին[3]: Անիկա ըսաւ իրեն. "Եթէ սակէ մեկնիս (անց. ապ.), պիտի ղղջաս „ (wirſt du es bereuen): — Քրիստափոր Կոլոմբոս Փերդինանդոս[4] թա-

[1] Calypſo. [2] die Göttin. [3] Telemach. [4] Ferdinand.

գաւորէն ինչ ընդունեցաւ: Իրմէ երեք նաւ ընդունեցաւ, որոնցմով դէպ ի նոր աշխարհք մը ճամբայ ելաւ[5]: — Բարեյուսոյ Հրուանդանն[6] ով գտաւ: Բարթուղիմէոս Տիաշ[7] [անուամբ] Լուսիտանացի[8] մը: — Վերիվերոյ[9] ուսմունք յաճախ ինչ յառաջ կը բերեն[10]: Յաճախ միջակ[11] եւ յանձնապաստան[12] մարդիկ յառաջ կը բերեն: — Գողը բռնուեցա՞ւ[13]: Ոչ, անիկա փախաւ: — Ինչ պէտք է փնտռել, եւ ինչ բանէն (հյց.) պէտք է փախչիլ: Իարի ընկերութիւնը պէտք է փնտռել եւ չարէն փախչիլ:

[5] unter Segel gehen ſ. ab|ſegeln. [6] das Vorgebirge der guten Hoffnung. [7] Bartholomäus Diaz. [8] ein Portugieſe. [9] oberflächlich. [10] bringen ... hervor. [11] mittelmäßig. [12] anmaßend. [13] fangen.

18.

Որչափ ատակ ձախսեցիք: Երկու ֆիորին ձախսեցի: — Անիկա քանի՞ դանակ կորնցուց: Անիկա երկու դանակ եւ մէկ կարոյ կորնցուց: — Ա՛ս նկարներն ինչպէս կը գտնէք: Շատ աղեկ կը գտնեմ (գանձնք): — Սաքսոնիայի (ա—պ.) թագաւորութիւնը մե՞ծ է: Ոչ, պզտիկ է. հազիւ (nur) 280 քառակուսի մղոն (Quadratmeilen) է (ունի): — Թագաւորը շատ դղեակ(ներ) ունի՞: Անիկա շատ դղեակներ եւ պալատներ ունի: — Ձեր տէր մօրեղբօր պարտէզը մե՞ն է: Հոս է մօրեղբօրս (պարտէզը), եւ հոն է պապուս պարտէզը: — Ա՛ս քաղքին անունն ինչ (welches) է: Անի է (կը կոչուի): — Ա՛ս ծաղկին որո՞ւն կու տաք: (Զայն) հօրեղբօրաղջկան պիտի տամ: — Ձեր հօրեղբօրաղջկան անունն ինչ է (ինչպէս կը կոչուի): Անիկա Սոփիա կը կոչուի: — Ա՛ս տունը քանի՞ պատուհան ունի: Տասն'ուերթը պատուհան ունի: — Խոհակերուհին չտեսաք: Այո (Ø ja), գինքը խոհանոցին մէջ տեսայ. եթէ հոն չէ բակը պիտ'որ ըլլայ:

19.

Գերմանիա գացած (եղած) էք: Այո, երկու անգամ Գերմանիա գացած եմ. անգամ մը պաարըն (in Baden), ուրիշ անգամ պերլին: — Ա՛ս կինն աղքա՞ս է: Այո, շատ աղքատ է. միշտ հիւանդ է: — Անիկա ինչ ծաղիկ է: Մեխակ[1] (մըն) է: — Դուռն ինչո՞ւ գոց(ուած) է: Շեմ գիտեր, բայց կը տեսնեմ՝ որ բոլոր դռները գոց են: — Տէր կոմսն իր որդւոյն վրայ գո՞հ է: Անիկա անոր վրայ բոլորովին (ganz) գոհ չէ: — Գեռ ուրիշ զաւակ (յժ.) ունի՞: Գեռ 12 տարեկան (von 12 Jahren) որդի մը

[1] Nelke ſ. ֆ.

եւ 9 տարեկան դուստր մ'ունի: — Ոսկիէ գնդասեղնիդ չգտաք: Ոչ, ամէն տեղ[2] փնտռեցի, բայց չկրցայ (զայն) գտնել:

[2] überall.

20.

Ի՞նչ բան սովորաբար զանց կ'առնուն[1] [այն] մարդիկ, որոնք դինին ու խաղը կը սիրեն: Սովորաբար իրենց գործքերը զանց կ'առնուն: — Կալիպսէի քարայրն ո՞ւր էր (lag): Իւրոյ[2] մէ վրայ էր: — Ի՞նչ բանի վրայէն (wonach) պէտք չէ դատել[3], Ըստ երեւութին[4]: — Մինչեւ ո՞ւր (wie weit) հալածեցին[5] թշնամին: Մինչեւ լեռները: — Գաղղիան մինչեւ ո՞ւր կը տարածուի[6]: Ռենոսէն եւ Մասսէն (Maas) մինչեւ Ովկիանոս (Ocean) կը տարածուի: — Ո՞րչափ բնակիչ ունի: 38 միլիոն (յո.) ունի: — Ճշմարի՞տ է՝ որ գլուխնիդ կը ցաւի (գլխացաւ ունիք): Ոչ, տէր իմ, ճշմարիտ չէ, շատ աղէկ եմ[7]:

[1] vernachläſſigen. [2] der Hügel. [3] urteilen. [4] der Schein. [5] verfolgen. [6] ſich erſtrecken. [8] ich befinde mich ſehr wohl.

21.

Կը ճանչնաք աս օտարականն, որ նոր (eben) եկած է: Այո, զինքը կը ճանչնամ: — Ո՞վ է անիկա: Երիտասարդ Անգղիացի մըն է: — Հո՞ պիտի բնակի: Ոչ, հոս պիտի չբնակի, անիկա Պրիւսել կը բնակի[1], երեք օր միայն հոս պիտի մնայ: — Աս անգղիերէն նամակն ո՞վ գրած է: 2 կարօտս 1 եղբայրս: — Ե՞րբ պէտք է զանիկա նամակատուն տանիլ: Յովհաննէս կերակրէն (ճաշէն) վերջը զայն պիտի տանի[2]: — Աս երկու նկարներէն ո՞րն ամենագեղեցիկն է: Ինծի կ'երեւայ՝ [թէ] ձախ կողմինն[3] ամենագեղեցիկն է (առեր.): — Ափուա[4] խաղայի՞ք: Դեռ չէ, բայց այսօր կէսօրէն վերջը (diesen Nachmittag) պիտի խաղանք: — Ձո՞վ կը սիրէք: Ծնողքս, եղբայրներս ու քոյրերս կը սիրեմ, եւ իրենցմէ կը սիրուիմ: — Եղբօրորդինիդ իր խոհին մէջ ի՞նչ բան կարգի կը դնէ[5]: Իր գրքերն ու պղնձագրոշմ պատկերները[6] կարգի կը դնէ: — Ձեր նամակներն ե՞րբ կը գրէք: Առաւօտ (des Morgens) կը գրեմ, երբեմն[7] ալ իրիկունը:

[1] bewohnen հյց. [2] hintragen. [3] das links. [4] Ball. [5] ordnen. [6] Kupferſtiche. [7] manchmal.

22.

Ձեր գաղղիերէն շարադրութիւնն ինչո՞ւ չէք շինած: Ես (զայն) շինած եմ, բայց քոյրս (զայն) չէ շինած: — Տէր պ.-ին

յով գայիք (եղաք): Անոր քովը գացի, բայց տունը չէր: — Զո՞վ տեսաք եւ որո՞ւն հետ խօսեցաք: Իւր կինը տեսայ եւ անոր հետ խօսեցայ: — Իրեն (ֆէ.) տոմսակը տուի՞ք[1]: Ոչ, զանիկա ետ բերի, որովհետեւ Դուք ինծի ըսած էիք, [որ] զայն նայն իսկ (ſelbſt) տէր պ.-ին տամ(առեր.): — Երբեմն երաժշտութիւն կը զարնէ՞ք (machen): Շատ անգամ, վասն զի զայն շատ կը սիրեմ: — Ի՞նչ գործիք[2] կը զարնէք (ſpielen): Ես քնար կը զարնեմ, եւ քոյրս դաշնամուր կը զարնէ: — Կը հաճի՞ք (Wollen Sie die Güte haben) ինծի բան մը պատմելու: Շատ սիրով (gerne), բայց ի՞նչ պէտք եմ Ձեզի պատմել: Եթէ կը հաճիք գեղեցիկ մանրավէպ[3] մը:

[1] übergeben. [2] das Inſtrument. [3] die Anekdote.

23.

Այս աստիճ հաճոյ է Ձեզի: Ինծի հաճոյ չէ: — Ինչո՞ւ հաճոյ չէ Ձեզի: Շատ կոշտ[1] է: — Աւելի աղէկ [մ']ունիք: Հա՛ս կայ ուրիշ [մը], որ աւելի ազնիւ (fein) է: — Ի՞նչ պէտք եմ ընել գերմաներէն սորվելու համար: Պէտք էք շատ ուսանիլ[2]: — Ծառանիդ մինչեւ ո՞ւր տարաւ իմ արկղս: Մինչեւ երկաթուղին տարաւ (զայն): Ժամը քանի՞ին զայն հո՞ն[3] տարաւ: Զայն ժամը տասնումէկ ու կէսին հո՛ն տարաւ: — Այս ճամբան ո՞ւր կը տանի[4]: Անիկա դղեակը (auf . . .) կը տանի: — Դէպ ի Իտալիա ճամբորդութիւն ըրած էք: Երեք տարի յառաջ հո՛ն ճամբորդած եմ: — Եղբայրնիդ ատեպ ճամբորդութիւն կ'ընէ՞: Յառաջագոյն շատ ճամբորդութիւն ըրած է, բայց հիմայ ալ ճամբորդութիւն չ'ըներ: — Աս շիշին մէջի գինին փորձած էք: Զայն փորձեցի, շատ աղէկ է:

[1] grob. [2] ſtudieren. [3] dahin. [4] führen.

24.

Ինչո՞ւ այսչափ տրտում էք: Քան մ'ունիմ, որ զիս անհանգիստ կ'ընէ (beunruhigt): — (Եւ) ի՞նչ է այս [բանը]: Զայն Ձեզի պիտի ըսեմ, եթէ առանձին ըլլանք: — Ձեր հօրեղբօրաղջիկն այսօր դո՞ւրս եկաւ: Անիկա դուրս գնաց քանի մը բան գնելու համար (um einige Einkäufe zu machen): — Ի՞նչ գնած է: Կանաչ մետաքսէ (ſeidenes) զգեստ մը եւ սեւ թաւշէ գլխարկ (Samthut) մը: — Ինչո՞ւ միշտ հայերէն կը խօսիք եւ երբեք գերմաներէն [չէք խօսիր]: Որովհետեւ համարձակութիւն (den Mut) չունիմ. կը վախնամ սխալ ընելու: Ասիկա բան մը չ'ըներ.

խօսեցէք միայն։ — Կը կարծէ՞ք[1], թէ մոռցած ըլլամ Ձեր ինծի ըսածը (յէ՛.-ով)։ Ա՛յո, (զայն) կը կարծեմ, որովհետեւ Դուք զայն չհատարեցիք (չըրիք)։ — (Զայն) չեմ մոռցած, բայց ժամանակ չունեցայ զայն ընելու, վաղը (զայն) պիտի կատարեմ (ընեմ)։ — Կրնա՞ք Ձեր դործքը լմնցընել առանց[2] իմ (Ձեզի) օգնելուս։ Ոչ, կ'աղաչեմ Ձեզի [որ] ինծի օգնէք (ա-նէք.) եւ բոլոր դժուարութիւնները ինծի մեկնէք (անէք.)[3]։ — Կրնա՞մ (dürfte ich) Ձեզմէ (ից.) ծառայութիւն մը (um eine Gefälligkeit) խնդրել[4]։ Ի՞նչ կը բաղձաք։ Հաճեցէք (haben Sie die Güte) ինծի հարիւր ֆրանք փոխ տալու. շուտով զայն (յէ.) Ձեզի ետ կը դարձնեմ (ապա.)[5]։ Կ'ուզեմ զայն (յէ.) Ձեզի փոխ տալ, բայց [այսու] պայմանաւ (unter der Bedingung), որ զայն քիչ օրուան (յէ.) մէջ ինծի ետ դարձնէք։ — Ա՛ս սակավ ի՞նչ կ'ուզէք ընել։ Կօշկակարիս հաշիւը կ'ուզեմ վճարել։

[1] glauben. [2] ohne daß ... [3] erklären. [4] bitten. [5] zurückgeben.

25.

1. Ա՛յն տղուն աչուըներն ի՞նչպէս են։ Կապոյտ են։ — Ձկերն ո՞ր կ'ապրին։ Ձկերը կ'ապրին դետերու, լճերու եւ ծովու մէջ։ — Ա՛ս գեղեցիկ տան մէջ ո՞վ կը բնակի։ Մօրաքոյրս կը բնակի (անոր մէջ)։ — Քանի՞ տղայ (յէ.) ունի։ Երեք որդի եւ երկու դուստր ունի։ — Իւր քովն եղբօրաղջիկ մ'ալ չունի՞։ Ա՛յո, երկու եղբօրաղջիկ ունի իւր քովը։ — Քանի՞ տարեկան են։ Մէկը տասնուեօթը, միւսը տասնուհինգ տարեկան է։ — Ամենածանր մետաղն ո՞րն է։ Լինոսկին[1] ամենածանր մետաղն է։ — Անիկա ամենաօգտակար մետաղն ալ է։ Ոչ, երկաթին չափ օգտակար չէ, բայց աւելի սուղ է, իսկ (եւ) ոսկին ա՛լ (noch) աւելի սուղ է։ — Կ'ուզէք դինի՞ թէ (oder) գարեջուր խմել։ Գարեջուր։

2. Վաճառականն ի՞նչ (պիսի) թուղթ կը ծախէ։ Անիկա ամէն տեսակ (allerlei) թուղթ կը ծախէ։ Գրիչ (յէ.), մատիտ (յէ.), կնքամոմ[2] եւ կնքահաց[3] ալ կը ծախէ։ — Երկայն ատեն կա՞յ, որ անգղիերէնն կը սորվիք։ Ոչ, տեր իմ, դեռ երկայն ատեն չէ։ — Ո՞ր ժամանակէ ի վեր (seit wann) զայն կը սորվիք։ Հազիւ (erst) վեց ամսէ ի վեր զայն կը սորվիմ։ — Կարելի՞ [բան] է։ Դուք արդէն բաւական[4] աղէկ կը խօսիք։ — Կատակ կ'ընէք[5], դեռ շատ [բան] չեմ գիտեր։ — Բոլոր Ձեզի ըսածներս կը հասկնա՞ք։ Շատ աղէկ կը հասկնամ (զայն), բայց չեմ կրնար Ձեզի աղէկ պատասխանել։

[1] das Platin. [2] Siegellack. [3] Oblaten. [4] ziemlich. [5] scherzen.

Բ. ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ

1. ՄԱՆՐԱՎԻՊՔ

1.

Als[1] ein Irländer einem Landsmann begegnete[1], fragte er ihn: „Was ist aus unserm alten Freund Johann geworden?“ — „Ach, mein Lieber“, erwiderte[2] der andere, „der arme Johann wurde verurteilt[3], gehenkt zu werden[4]; aber er rettete[5] sein Leben dadurch[6], daß er im Gefängnis[7] starb[6].“

[1] իւր մէկ հայրենակցին հանդիպելով. [2] պատասխանեց. [3] դատապարտուեցաւ. [4] կախուելու. [5] ազատեց. [6] մեռնելով. [7] բանտի մէջ։

2.

